

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՎՈՐ ՊԱՐՈՆՅԱՆ, «ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ», ԳԻՐԶ 1

(Հայպետհրատ, Երևան, 1954 թ., 576 էջ)

Վերջերս Հայաստանի պետական հրատարակչությունը լույս ընծայեց հայ հանճարեղ երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Ընտիր երկեր»ի առաջին հատորը, 10.000 տպաքանակով:

Անվանաթերթին հաջորդող էջի վրա, որպես նշանաբան, զետեղված են մեր խոշորագույն երգիծաբանի խորիմաստ և դիպուկ խոսքերից մի քանիսը, այդ շարքում՝ հետևյալը. «Պիտի հայածվիմ, պիտի ծնծվիմ: Վնաս չունի, Սովրատ ալ հարածվեցավ. ապագա սերունդը պիտի անմահացնե իմ անունը»:


Տիրող բռնատիրական վարչակարգի և քաղքենիական նեխած բարբերի դեմ երգիծանքի հատու զենքով պայքարի դուրս եկած խիզախ մարտիկը, իրոք, հայածվեց, ծնծվեց, ենթարկվեց նյութական քայքայիչ զրկանքների և մահացավ հետին թշվառության մեջ կոստանդնուպոլսի Ազգային հիվանդանոցում: Մահացավ անմուռազ, իր անզուգական երկերի առանձին հատորներով տպագրությունը չտեսած, բացի «Առամնաբույժն արևելյան»ից և «Ազգային շոշեր»ից:

Պարոնյանի մահվան և հայ ժողովրդի պատմության սովետական ժամանակաշրջանի միջև ընկած երեսնամյակի ընթացքում, արևմտահայ այս կամ այն կենտրոնում և Կոփկասում, ճիշտ է, լույս տեսան նրա առանձին գործերը, սակայն լույս տեսան շատ սահմանափակ տպաքանակով: Անմահ երգիծաբանի ստեղծագործությունների մեծագույն մասը մնում էր ցիրուցան հայ պարբերական մամուլի սյունակներում, մոռացության մատնված:

Բայց եկան այն պայծառ օրերը, որ նախագուշակում էր Պարոնյանը և որի երազանքով իր տառապալից կյանքի մեջ նա սփոփանք էր գտնում:

Այդ ապագան հանդիսացավ հայ ժողովրդի պատմության սովետական դարաշրջանը:

Հայրենի երկիրը հանճարեղ երգիծաբանին գնահատեց ըստ արժանվույն: Նրա անունը և ստեղծագործությունները դարձան հանրաճանաչ: Ավագ և կրտսեր սերնդի հմուտ գրականագետները նվիրվեցին նրա հույտի և անհայտ մնացած գործերի հրատարակմանը,



ուսումնասիրությանը և մեկնաբանմանը: Գրականագիտական այդ ապագաբեզում իրենց մոծումները կատարեցին՝ պրոֆ. Արսեն Տերտիրյանը, պրոֆ. Հրաչյա Աճառյանը, արվեստի վաստակավոր գործիչ Գարեգին Լեոնյանը, պրոֆ. Մանուկ Աբեղյանը, էդ. Խոճիկը, Գառնիկ Ստեփանյանը, Սուրեն Հարությունյանը, Ալիս Մանուկյանը և շատ ու շատ ուրիշներ: Գրվեցին և գրվում են Պարոնյանի գրական հարուստ ժառանգությանը նվիրված դիսերտացիաներ (ավարտական գիտական շարագրություններ), մենագրություններ, հոգվածներ և այլն: Տաղանդավոր երգիծաբանի առանձին աշխատությունները հրատարակվեցին բազմաթիվ անգամներ, իսկ նրա ամբողջական երկերը՝ «Երկերի լիակատար ժողովածու»ն, լույս ընծայվեց 11 հատորով և այժմ նրանք մեր բոլոր հանրային գրադարանների և տասնյակ հազարավոր անհատական գրադարանների զարդն են հանդիսանում:

Պարոնյանի թողած գրական ժառանգությունը անգնահատելի ժառանգություն է մատուցել սերունդներին: Աշակերտները, բոլոր դպրոցների բարձրագույն դասարաններում և Պետական համալսարանի և զանազան ինստիտուտների լեզվագրական ֆակուլտետների ուսանողները ուսումնասիրում են Պարոնյանին՝ անսահման սիրով և հիացմունքով:

Պարոնյանի «Առամնաբույժն արևելյան»ը, «Շողորթը», «Մեծապատիվ մուրացկանները», «Պաղտասար աղբար»ը մեր բնմերից ցած չեն իջնում, վայելելով անսահման ժողովրդականություն:

Պարոնյանի գլուխ գործոց ստեղծագործություններից մի քանիսը թարգմանվել են ռուսերենի, հսկայական տպաքանակով հրատարակվել են Մոսկվայում և դարձել միլիոնավոր մարդկանց մատչելի և սիրելի: «Պաղտասար աղբար»ի ռուսական թարգմանությունը ռուս դերասանների կողմից սքանչելիորեն բեմադրվել է Մոսկվայում, Երևանում և ուրիշ քաղաքներում: Բեմագրության արտաքին ձևավորումը կատարել է ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը:

Պարոնյանը մեր ամենաժողովրդական դասականներից մեկն է հայրենի երկրում: Նրա աֆորիզմներն ու թեմայերը խոսքերը մտել են կենցաղի մեջ, բոլոր շուրթերի վրա են առօրյա խոսակցություններում: Պարոնյանի ժողովրդական անունը բոլոր սրտերի մեջ գրոշմված է խորապես:

Անմահ երգիծաբանի այն կանխագուշակությունը, թե ճապագա սերունդը պիտի անմահացնեն իմ անունը, իրականություն է դարձել:



Հայկական ՍՍԻԲ Գիտությունների ակադեմիայի Արևիկյանի անվան գրականության ինստիտուտը նախապատրաստում է անմահ Պարոնյանի գրական ամբողջ ժառանգության ակադեմիական հրատարակությունը: Այդ, իհարկե, ժամանակ պահանջող աշխատանք է: Մինչ այդ, ընդառաջելով ընթերցող հասարակության առող պահանջին, Հայպետհրատը ձեռնարկել է Պարոնյանի ընտիր երկերի երկհատոր հրատարակությունը՝ մոտ 80 տպագրական մամուլի ծավալով:

Երկհատորյակը կազմել է երգիծաբան-գրականագետ Էդ. Խոճիկը: Նա առաջնորդվել է Պարոնյանի ստեղծագործությունների ժամանակագրական կարգը պահպանելու սկզբունքով, շատ քիչ դեպքում անելով թեթև շեղումներ՝ նյութերի ժանրային հարակցությունը ըստ հնարավորին պահպանելու նպատակով: Նա ջանացել է հորինել մի կուռ ամբողջություն՝ աշխատելով արտացոլել բազմաժանր և բազմերանգ երգիծաբանի արվեստի բոլոր առանձնահատկությունները:

Արգեն լույս տեսած այդ առաջին հատորում ընդգրկված են՝ «Մեծապատիվ Մուրացկաններ»ը, «Աղ-գային ջոջեր»ը և «Հոսհոսի ձեռաստեր»ը՝ ամբողջապես, և ընդարձակ հատվածներ «Մեղուծից», «Թատրոն»ից, «Կամիթներ»ից, «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ»ից:

Պարոնյանի գրախոսվող ներկա հատորում ամփոփված են հանճարեղ երգիծաբանի գլուխ գործոց երկերը:

Մանրամասն արժեքավորելու համար այդ գործերը, չի կարելի չբնորոշել այն հիմնականը, ինչ արծարծել է հայ կլասիկ երգիծաբանը իր տաղանդավոր երկերում և այն, ինչ բնորոշ է նրա գրչին:

«Ազգային ջոջեր».— Ահա Պարոնյանի փառքը, նրա քաղաքական սատիրայի գագաթը. այստեղ խոսքն է նրա երգիծական տաղանդի ողջ ուժը: «Ազգային ջոջերը» ինքնին իր ժամանակի անհատ հասարակական գործիչների երգիծական խոսքված գեղարվեստական կերպարների շարանն է: Պարոնյանի այս հուշակավոր

երկում լավագույն կերպով արտացոլված են իր իսկ ապրած ժամանակաշրջանի հասարակական տարրեր հոսանքներն ու ուժերը իրենց բոլոր հատկանիշներով:

«Մեծապատիվ մուրացկաններ».— Պարոնյանը ընտրելով քննադատական ունակիզմի ճշմարիտ ուղին, անխնա մերկացնում է իր ապրած հասարակարգի ամենաարտառոց կողմերը. հեղինակը իր տաղանդի ողջ ուժով ստեղծում է կերպարներ, որոնք օժտված են հոգեբանական ցայտուն գծերով և որոնք դարձել են վաղուց հասարակ անուններ հայ ընթերցող հասարակության համար (Արխողոմ աղա, Մանուկ աղա, Բանաստեղծը, խմբագիրը և այլն):

«Մեղու», «Թատրոն» և «Կամիթներ» երգիծական գործերում Պարոնյանը հանդես է գալիս որպես անխնա ծաղկող և խարաղանդող հրապարակախոս ընդդեմ հետադիմական հոսանքների, լիբերալ մամուլի: Նա իր քաղաքական սատիրայի ողջ ուժով մերկացնում է ներքին և արտաքին քաղաքականությունը, եվրոպական դիմապակիտության նենգ քաղաքականությունը Հայկական հարցում:

«Պտույտ մը Պոլսո քաղերուն մեջ» իր երգիծական երկում Պարոնյանը ծաղրել է նաև առօրյա կյանքի ամենաստվերոտ և խոցելի կողմերը, այլասերված վարք ու բարքերը և այլն:

Գրախոսվող հատորի սկիզբը տեղավորվել է Պարոնյանի կյանքն ու գործը ներկայացնող ընդարձակ ներածական, որը գրել է գրականագետ Գառնիկ Ստեփանյանը: Բնագրի ճիշտ ընկալումը դուրսացնող ժանտիպագրությունները պատկանում են գրականագիտուհի Ալիս Մանուկյանի գրչին:

Մոտ 600 էջից բաղկացած այս հատորը տպագրվել է ընտիր թղթի վրա: Գրավիշ է արտաքին ձևավորումը: Կազմը, անվանաթերթը և ենթախորագրերը գործն են նկարիչ Ռ. Պետրոսյանի: Պատկերազարդումը ստեղծագործությունն է երիտասարդ նկարիչ Արա Բեքարյանի: Հիանալի են Պարոնյանի ստեղծած պոլսական տիպարները նկարչի պատկերացումով, հաջող է տրված պոլսական բնորոշ գունդությունը: Արխողոմ աղայի և մյուս տիպարների պատկերներն առաջին իսկ հայացքով գրոշմվում են հիշողության մեջ:

Շուտով լույս կտեսնի Պարոնյանի «Ընտիր երկեր»ի երկրորդ գիրքն ևս: Նա բովանդակելու է մեծածախ երգիծաբանի հետևյալ գործերը. «Միծաղ», «Առտնին տեսարաններ», «Խիկար», «Քանի մը խոսք առ օրիորդ կամ տիկին Պատմություն», «Քոսակցությունը մեռելոց», «Գրպանիս տետրը», «Նետ» և «Պաղտասար աղբար»:

Հ. ԱՐԱՄՅԱՆ

